№ 140.—ՓԱՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1882

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ ասն օրերից,
Տարեկան գինն է 10 ռուբլի,
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ.

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ ասն օրերից առ ուօտեան 11—2 ժամը կէսօրից յետ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Меру Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած Թէ՛ յօդուածները եւ Թէ՛ նամակները պէտք է պարտ գրուած լինեն գրողի ստորագրութեամբ եւ հասցէով. Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները. Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ.

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն տի բառի 2 կոպ. Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով. Յայտարարութիւնները ընդունվում են Խմբագրատունը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Ե. Տէր-Գաւսէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պավիլիոնում.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1883 ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի նոյն դիրքով եւ ուղղութեամբ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I) կառավարութեան կարգադրութիւններ.—II) Առաջնորդող յօդուածներ ամեն տեսակ նիւթերի եւ հարցերի մասին.—III) Ազգայինը.—Թղթակցութիւններ ամեն տեղերից եւ յօդուածներ ազգային նիւթերի վերայ.—IV) Քաղաքական.—Առաջնորդող յօդուածներ եւ տեսութիւններ քաղաքական հարցերի մասին. քաղաքական յօդուածների եւ լուրերի թարգմանութիւններ եւ թղթակցութիւններ.—V) Բանասիրական.—Զանազան գիտութեանց վերաբերեալ ուսումնական յօդուածներ, վէպեր, պատկերներ, թէ՛ ինքնուրոյն եւ թէ՛ թարգմանած.—VI) Մանր լուրեր.—(որի մէջ եւ թեթեւ բանաքննութիւններ).—VII) Խառն լուրեր.—VIII) Պատասխաններ.—IX) Յայտարարութիւններ.—X) Գէեղեցօններ.

Տարեկան գինն է 10 ռ., կէս տարվան 6 ռ.:

Թիֆլիզում կարելի է ստորագրվել 1) Խմբագրատունը, II) պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում, III) պ. Շահվերդեանցի պավիլեօնում, և IV) «կով կաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Գաւսէփեանի ծխախոտի խանութում.

Օտարաքաղաքացոց համար հասցէն է՝ Въ редакцію газеты «Меру Айастани», Тифлисъ, կամ Rédaction du Journal arménien «Meghou Haïastani», Tiflis.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռի ներկայ վիճակը.—Կարսի հայ երկաթ. դպրոցների փակումը.
Ազգայինը.—Մեր պատասխանը.—Հայկական թատրոն.—Թղթակցութիւններ Հին-Նախիջեանից և Շամախուց.
Քաղաքական.—Քաղաքական լուրեր.
Մանր լուրեր.
Յայտարարութիւններ.
Բանասիրական.—Թղթակցութիւն Կ. Պոլսից.

ԹԻՖԼԻՍ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1882 Թ.

—

Տարակոյս չը կայ, որ այսօր ամեն ճշմարիտ հային զբաղեցնող, հետաքրքրող հարցը, հանդուցեալ վեհափառ կաթուղիկոսի մահից յետո, սուրբ աթոռի ներկայ վիճակն է և նրա ապագայ դրութիւնը: Եթէ սուրբ աթոռը Շուտով վիճակի մէջ է, դա մի զարմանալի բան չէ, այլ և շատ բնական է, նա նմանւում է մի տան, որի տէրը ինքնուրոյն կառավարում էր իւր առնը, առանց ուշ եւ ետ նայելու մանաւանդ, որ պատահականութեան որպէս իւր հասցեագրութիւնն ու դպրոցները թելադրում էին, մենք նորին օծութեան ժամանակ թէ սինօդի և թէ՛ միաբանութեան դերը բոլորովին կրաւորական ենք համարում: այսպէս է եւ հիմա գործերից: Ի՞նչ պիտի լինի այդպիսի մի տան վիճակը, եթէ տան տէրը առանց որևէ հրահանգի իւր յետագային, մեռնի: Այսօր սուրբ Էջմիածնայ նոյն իսկ սինօդը անդիտակ է այն ամենի, ինչ որ Նորին օծութիւնը գործել է, այսօր նա ճնշել է առանց որևէ հրահանգի, որով կարողանար շարունակել տան կառավարութիւնը մինչև տան նոր տիրոջ ընտրութիւնը: Բայց բնականաբար և օրէնքի զօրութեամբ այդ ծանր բեռը ծնում է այսօր նրա վերայ:

Հարկաւոր էր Թէ՛ տալ նրան հրջահայեաց լինելու, մտածելու, ծանօթանալու անյետալի հետ, սուրբ աթոռի ամեն հանգամանաց և իւր համար մի հրահանգ կազմելու ինքնաբերաբար, նամանաւանդ, որ պատասխանատուութիւնը ամենի համար, մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնը, նրա վերայ է ծանրանում: Մինչև հիմայ սինօդի անդամներին միացնողը մեծաւորի կամքն է եղել, որ վերացել է, այժմ հարկաւոր է Թէ՛ տալ, որ այդ միութիւնը կայանայ խորհրդակցութեամբ միմեանց հետ: Բայց դժբաղդաբար այդպէս չէ լինում, ամեն կողմից Թէ՛ լրագրութեան մէջ Թէ՛ ժողովրդի կողմից, Թէ՛ մանաւորներից և Թէ՛ ամենից, ով միայն ազդել կարող է, թափվում են սինօդի գլխին պահանջներ և ոչ խորհուրդներ, այնպէս որ նա ամենազօրաւոր դրութեան մէջ է և կարող է յակամայս սխալանաց մէջ ընկնել, եթէ Թէ՛ չը տրվի նրան հանգիստ կերպով խորհելու և իւր պատասխանատուութեամբ գործելու, այն չըջանակի մէջ, որ որոշված է նրա համար օրէնքով և սովորութեամբ:

Մեր խօսքն անցեալի վերայ չէ, այլ ներկայի և ապագայի վերայ: Մենք համոզված ենք, որ սրբազան սինօդականները, ինչպէս և բոլոր միաբանութիւնը ոգեւորված են յանկութեամբ Թէ սուրբ աթոռի շահերը պահպանելու և Թէ՛ ձեմարանը պահելու, ամենայն զոհաբերութեամբ իրանց կողմից: Ներկայումս ապարդիւն վէճերով և անօգուտ հետազօտութիւններով սինօդը պարապեցնելը, մեր կարծիքով, ոչ միայն խոհեմութիւն չէ, այլ և ձեռնակար, աչքի առաջ ունենալով այն ծանր հանգամանքները, որոնց վերայ պէտք է դարձվի նրա ուշադրութիւնը, մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնը: Այդ հանգամանքների մասին մենք կը խօսենք իւր ժամանակ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
6/18 դեկտեմբերի.
(Թղթակցութիւն «Մուղ Հայաստանի» լրագրի)

Օրուան կարեւորագոյն խնդիրը պատրիարքական վերահաստատութեան խընդիրն է, որոյ վրայ ընդարձակօրէն կը գրեն և Թերևս կը չաւարտենն լրագիրք ոմանք, և հերօսական ժամուն ալ ոչինչ նուազ կարեւորութիւն տալով հայ լրագրաց գլխաւոր յօդուածները Թարգմանելու հետամուտ է:

Նախորդ նամակով ծանուցինք կայսերական բարձր հրամանը զՆերսէս Պատրիարք յաթոռն իւր վերադարձնելու, և Ներսէսի տեսակցութիւնը Սայիդի հետ: Բայց ազգային երեսփոխանական ժողովոյ կոչմանէ ընդունուած հրաժարական մը պէտք էր, որ նոյն ժողովոյ քննութեան ենթարկուէր, Թէ հասկացողութիւնն ու դպրոցները Թելադրում էին, մենք նորին օծութեան ժամանակ Թէ սինօդի և Թէ՛ միաբանութեան դերը բոլորովին կրաւորական ենք համարում: այսպէս է եւ հիմա գործերից: Ի՞նչ պիտի լինի այդպիսի մի տան վիճակը, եթէ տան տէրը առանց որևէ հրահանգի իւր յետագային, մեռնի: Այսօր սուրբ Էջմիածնայ նոյն իսկ սինօդը անդիտակ է այն ամենի, ինչ որ Նորին օծութիւնը գործել է, այսօր նա ճնշել է առանց որևէ հրահանգի, որով կարողանար շարունակել տան կառավարութիւնը մինչև տան նոր տիրոջ ընտրութիւնը: Բայց բնականաբար և օրէնքի զօրութեամբ այդ ծանր բեռը ծնում է այսօր նրա վերայ:

Հարկաւոր էր Թէ՛ տալ նրան հրջահայեաց լինելու, մտածելու, ծանօթանալու անյետալի հետ, սուրբ աթոռի ամեն հանգամանաց և իւր համար մի հրահանգ կազմելու ինքնաբերաբար, նամանաւանդ, որ պատասխանատուութիւնը ամենի համար, մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնը, նրա վերայ է ծանրանում: Մինչև հիմայ սինօդի անդամներին միացնողը մեծաւորի կամքն է եղել, որ վերացել է, այժմ հարկաւոր է Թէ՛ տալ, որ այդ միութիւնը կայանայ խորհրդակցութեամբ միմեանց հետ: Բայց դժբաղդաբար այդպէս չէ լինում, ամեն կողմից Թէ՛ լրագրութեան մէջ Թէ՛ ժողովրդի կողմից, Թէ՛ մանաւորներից և Թէ՛ ամենից, ով միայն ազդել կարող է, թափվում են սինօդի գլխին պահանջներ և ոչ խորհուրդներ, այնպէս որ նա ամենազօրաւոր դրութեան մէջ է և կարող է յակամայս սխալանաց մէջ ընկնել, եթէ Թէ՛ չը տրվի նրան հանգիստ կերպով խորհելու և իւր պատասխանատուութեամբ գործելու, այն չըջանակի մէջ, որ որոշված է նրա համար օրէնքով և սովորութեամբ:

Մեր խօսքն անցեալի վերայ չէ, այլ ներկայի և ապագայի վերայ: Մենք համոզված ենք, որ սրբազան սինօդականները, ինչպէս և բոլոր միաբանութիւնը ոգեւորված են յանկութեամբ Թէ սուրբ աթոռի շահերը պահպանելու և Թէ՛ ձեմարանը պահելու, ամենայն զոհաբերութեամբ իրանց կողմից: Ներկայումս ապարդիւն վէճերով և անօգուտ հետազօտութիւններով սինօդը պարապեցնելը, մեր կարծիքով, ոչ միայն խոհեմութիւն չէ, այլ և ձեռնակար, աչքի առաջ ունենալով այն ծանր հանգամանքները, որոնց վերայ պէտք է դարձվի նրա ուշադրութիւնը, մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնը: Այդ հանգամանքների մասին մենք կը խօսենք իւր ժամանակ:

ԿԱՐՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ.

Կարսի երկաթ. դպրոցների դրութիւնը արդէն յայտնի է հայ հասարակութեան: Անցեալ ամսին մենք տպեցինք Կարսի դպրոցների անձնուէր վարչութեան հրաւէրը և մի առաջնորդողով հրաւիրեցինք ամեն տեղի հայերին օգնելու այդ դպրոցներին, որոնք պահպանվում են մի քանի ազնիւ երիտասարդների անձնուէր աշխատանքով և պատահական նուէրներով: Մինչև օրս դրեթէ ոչինչ օգնութիւն չստացան այդ դպրոցները:

Այժմ ստանում ենք Կարսի երկաթ. դպրոցների տեսուչ պ. բժիշկ Գազապետից մի նամակ, որը առաջիկայ համարում լոյս կը տեսնենք. Այդ նամակով յարգելի տեսուչը մի քանի տողերում դպրոցների օրհասական վիճակն է նկարագրում և նրանց մօտալուտ անկումն է գուժում: Աւելորդ ենք համարում կարսի դպրոցների կարեւորութիւնը այդ նորաստեղծ նահանգում հայ ազգաբնակութեան համար միատեղ բացատրելու: Մենք Թողնում ենք իւրաքանչիւր հային անելու այդ դպրոցների համար այն, ինչ որ ինքը կը ցանկանայ, մենք դառնում ենք Թիֆլիսի «Հայոց Բարեգործական» ընկերութեան:

Գեկտ. 19-ին, կիւրակի, ընկերութեան ընդհանուր ժողովում եկող 1883-ի համար նախահաշիւը քննելու ժամանակ շատ բազմակողմանի վիճաբանութիւն եղաւ Թէ՝ արդեօք ուսումնարաններին օգնելու համար նախահաշիւում որոշած գումարը Թիֆլիսի ուսումնարաններին պէտք է յատկացնե՞լ Թէ՛ գաւառներում դրամագլուխ կամ բացուելիք ուսումնարաններին: Ժողովի մեծամասնութեան տրամադրութիւնը գաւառների կողմն էր, Թէպետև այդ ժողովում ոչինչ չ'որոշուեցաւ: Որքան մենք գիտենք նախահաշուի գումարից 1300 ռ. մնում է գեռ չ'որոշված Թէ ինչ բաների վերայ պէտք է ծախսէ ընկերութեան խորհուրդը: Մենք „Բարեգործական“ ընկերութեան և նրա խորհուրդի ուշադրութիւնը հրաւիրում ենք կարսի երկաթ. դպրոցների վերայ և առաջարկում ենք որ այդ գումարը ամբողջապէս յատկացուի կարսի դպրոցներին, որով նրանք անկումից ազատուած կը լինեն: Դրանով «Բարեգործական» ընկերութիւնը մէկ բարի և ազգային յոյժ կարեւոր հասատատութիւն պահպանած կը լինի քան Թէ այդ գումարը կոոր-կոոր բաժանած՝ այստեղին կամ այնտեղին յատկացնէ: Ընկ. խորհուրդից հրապարակաւ խնդրելով, որ այդ բարի գործը կատարելու հեռամուտ լինի, միևնոյն ժամանակ չենք կարող չը խնդրել ամեն բարեմիտ հայից, որտեղ որ և գտնվում լինի, շնորհելու իւր լուման ազգային այդ դպրոցները անկումից փրկելու համար:

Սպ. Սպ.

ԱԶԳԱՅԻՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

«Մեղուի» մէջ տպուած իմ «Հայ բողոքականի ընտանիքը» վերնագրով պատկերը, ըստ երեւոյթին անախորժ տպաւորութիւն է արել բողոքական հայերից ջերմեռանդների վերայ, և ահա նրանցից մէկը՝ Ե. Փիլոսուդեանց ըստորագրութեամբ «Մշակի» 218 համարում տպուած իւր մի նամակով հանդէս է գալիս բողոքական մարդոցների դատը պաշտպանելու *):

*) Յաւելումենք, որ չը կարողացանք այս յօդուածը չուտ տպագրութեան յանձնել:

Խմբ.

Ս. Պատրիարք հայրը, որ արդէն մի քանի աշխարհականաց այցելութիւնները ընդունած էր, սիրալիր մեծարանօք ընդունեց ազգային պաշտօնական պատգամաւորութիւնը, որ կը հրաւիրէր պիքը յներսուսաղէմատուն ի Գուզքաւն (բայց ոչ ի պատրիարքարան), սպասելով ազգային ժողովոյ օրինաւոր և անհրաժեշտ վերացման, վերջապէս եկաւ ուրբաթ օրը. օր՝ գումարման երեսփոխանական ժողովոյ, որ Թէև ի Զալաթիա պիտի գումարուէր, բայց այսպիսի պաշտօնական մեծ օրերուն մէջ ըստ աւանդական սովորութեան Գում-քարուի մայր եկեղեցու մէջ իր նիստերը կ'ընէ. Ներկայ էին 70 էն աւելի երեսփոխանք քաղաքական և կրօնական ժողովոյ անդամք Թուով 28, առաջին անդամ լինելով ամբողջապէս ներկայ կը գտնուէին ժողովքի մը. Ե. Բօշաղէմայ փոխանորդ Սիմէօն եպիսկոպոս առաժամանակեայ կը նախագահէր ժողովին, երբ առենապետ ազգային ժողովոյ Թէօդ Թիրեաքեան էֆ. խնդրոյն վիճակը պաշտօնապէս հաղորդեց ժողովին և միանգամայն ազգին, որովհետև կային 2000 է աւելի անձինք այր և կին միանգամայն որք եկեղեցւոյն վերնատունը և գետնայարկը միանգամայն գրաւած էին: Դիտելու արժանի է, որ բաժանել երեսփոխանք Թուով չուրջ 30, որք քանի մը նիստերէ ի վեր կանոնաւորապէս հեռացած էին ժողովէն, նոյն օրը պատրիարքարան եկած էին, ուստի «Մասիսի» խմբագրապետի առաջարկութեամբ նախևառաջ նոքա ի միութիւն հրաւիրեցան և այս հրաւէրը պոռնկութեամբ ընդունուեցաւ այն բաժանել խումբէն, որ կ'ըմբռնէր Թէ հաչտութեան և միութեան օրը հասած է:

Ցետոյ Բ. Գանէն եկած հրամանագիրը կարդացուեցաւ Զիլէր-պէյի ստորագրութեամբ *) և ոտոշուեցաւ երկրորդ

*) Այս անպատեհութեան նկատմամբ յառաջիկային միայն պիտի խօսինք:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԳ

Պատմական

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԳ

Պատմական

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԳ

Պատմական

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆԳ

Պատմական

ՀԱՅԿԱԿԱՆ ՂՈՒԿԱՍԻ

ՂՈՒԿԱՍԻ

Ի. Ալիշան.

Ես դառ եմ հիմա՝
Ուժաթափ ու ես ոտքիս վրայ չեմ կենալ,
Ձեռքերս (յաղթական) ծալած են կուրծքիս վրայ,
Ու գլուխս կախ՝ ինչպես ծանր հասկերով ցորենի արտ,
Որ ծանրանում է ինքն իր վրայ,
Ու ինչպես ուռենի ճիւղ՝ որ ծռում է ինքն իր վրայ,
Ես ծռում եմ ինքս իմ վրայ,
Ես ծռում եմ ինքս իմ վրայ,
Ես ծռում եմ ինքս իմ

բնիկներ, Պօրա-Սայիդումը 10 եւրօպացի և 100 բնիկ, Իզմայէլումը և Սուէզումը 50-ական եւրօպացի և 50-ական բնիկներ։

— կայրօ. — Դատավարութեան փաստեր չը գտնելով եգիպտական իշխանութիւնը բանտից ազատեց 500 հոգի, որոնք մեղադրվում էին գողութեան, սպանութեան և հրդեհաձգութեան յանցանքների մէջ։

— Ֆրանսիական պինուորական ամսագիրը, «Revue militaire l'etranger» վերջին ժամանակներումս մի ընդարձակ և լուրջ յօդուած էր նուիրել Ռուսիայի և Անգլիայի պինուորական յարաբերութիւններին Մինչև Ասիայում։ Այդ յօդուածի վերջին մասում ասած է, որ չատ մօտ ժամանակում Անգլիայի և Ռուսիայի մէջ կ'սկսուի ահեղ պատերազմ Ասիայի մէջ, ուր և վճռուելու է իսկապէս արեւելեան հարցը։

—Լօնդօն.—«Times» լրագրին փարիզից գրում են, Անգլիական կառավարութիւնը մտադիր է եւրօպական տէրութիւններին մի շրջաբերական ծանուցագիր ուղարկել, որի մէջ բացատրելու է թէ Անգլիան ինչ անելու է Եգիպտոսի մէջ կարգ ու կանոնը վերահաստատելու, նրանում ներքին վերանորոգութիւնները կազմակերպելու և այդ ամենը եւրօպական ընդհանուր օգտի համար։

— Հռովմ.—Օբէրդանկի (որ Աբքենտում Ալտերիոյ կայսեր վրայ ռումբ ուզում էր ձգել) ապանման առթիւ աւստրիական դեսպանատան առաջ ամբոխը ցոյցեր արաւ։ Ոստիկանութիւնը ցրուեց խաժամուժին։ Եօթը հոգի բռնուած են, որոնք և դատարանին յանձնուեցան։ Նոյնպիսի անկարգութիւններ կրկնուեցան նաև Միլանում և Տուրինում, կառավարութիւնը քաղաքապետներին հրաւիրից խստութեամբ հետևել առաջն առնելու այդ տեսակ անկարգութիւններին։

— Բէռլին.— Օբէրդանկի սպանման առթիւ Վիէննայից այս հեռագիրն է ստացել «Post» լրագիրը։ Դեկտեմբերի 19-ին Օբէրդանկին յայտնեցին, որ իրան պէտք է կախեն։ Նա ժպտաց և մատներով սկսաւ սեղանի հետ խաղ անել։ Ժամը 7-ին կախաւէին։ Դատապարտուողը իրան գնդի համազգեստ հագին, երբ նրան զօրանոցի գաւիթը տարան, նա չորս կողմը նայեցաւ և յանդգնաբար ժպտում էր առանց ականջ կախելու քահանայի յորդորներին։ Մահուան վճիռը կարդացուելուց յետ Օբէրդանկը կամեցաւ խօսել, բայց թմբուկներու հարուածները նրա ձայնը խեղդեցին, որից յետոյ դահիճները իսկոյն բռնեցին նրան։ Վեց րոպէից յետոյ հետեցաւ մահը։

— Վիէննայից գրում են Բէռլինի «National Zeitung»-ին, Օրվայ խնդիրը այստեղ— դեսպանական խորհրդական գրաֆ Հէրբերդ Բիզմարկի գալուստն է։ Նա եկաւ այստեղ դեկտ. 15-ին հինգշաբթի երեկոյեան և հետևեալ օրը մի երկարատև այցելութիւն տուեց գրաֆ կալնօկիին, կասկած չը կայ, որ գրաֆ Հէրբերդ Բիզմարկը (իշխան Բիզմարկի որդին է) իրան հետ բերած ունէ Գերմանիոյ արտաքին քաղաքականութեան նպատակը բացատրող թղթեր, վերջին ժամանակվայ քաղաքական անցքերի վերաբերութեամբ։ Աւստրիոյ կիսապաշտօնական մամուլը ըստ երևոյթին չը գիտէր ինչպէս վերաբերուել դէպի այս անցքերը և չէ կարող մի ճանապարհ ընտրել իրան գործնականութեան համար։ Սրանից երեւում է, որ բարձր շրջանների մարդիկ իրանք էլ բանից տեղեկութիւն չ'ունէին և չկռահած էին առաջին անգամ։

— Բէռլին.—Նոյն լրագրի հաղորդած տեղեկութիւններին նայելով, Գերմանիայի զօրքերի համար բնակատեղիներ որոշելու ժամանակ, մտադիր են ռազմական տեսակէտի վրայ հետևակ զօրքից ձի զինուած քանակութիւն նշանակել, իսկ հարկաւոր դէպքում և թնդանօթաձիգ զօրքեր։ Միևնոյն ժամանակ մըտադրութիւն կայ յիշեալ տեսակների գծերի վրայ նոր-նոր զօրանոցներ չինել անյապաղ, նոյնպէս և արեւելեան երկաթուղու ցանցի վրայ մի քանի նոր գծեր աւելացնել։

— Փարիզ.—Ֆրանսիական հատարակապետութեան մօտ աւստրիա ունդարական դեսպանատան գրաֆ Վիմպֆֆէնը տարձանակով անձնատպանութիւնէ արել։ Կնկատում են, որ մաքի չինութիւնից է, որը անրուժելի հիւանդութիւն է առաջացրել։

— Փարիզ.— Գամբետտայի հիւանդութիւնը սաստկացել է։

— Պօլիս.—Բիւդժէում նշանաւոր պէֆիյիոը պատճառ է տուել կրճատելու զօրքի, վարչութեան և արքունիքի համար ծախքերը։

— Վիէննա.— «Neue Freie Presse» Բերլին հաղորդում են Պօլսից, որ Ֆուատ-փաշային կրկին կալտատուել են մի քանի պալատական բարձր սպանների հետ։ Նրա անխոհեմ ճառից օգուտ քաղելով նրա թշնամիները, հաւատացրել են սուլթանին, որ պինուորական կանոնների մէջ դատարութիւն կայ։ Թէպէտև Ֆուատի դէմ ոչ մի ապացոյց չը կայ, բայց և այնպէս կարելի է, որ նրան Պօլսից հեռացնեն, միմիայն սուլթանին հանդարտեցնելու համար։ Հասարակութեան մէջ Ֆուատի մեղաւորութիւնը անհիմն են համարում և ցաւում են, որ սուլթանը մանուկ թիւններին հաւատ է ընծայում, որոնք միայն չիոթութիւններ են յարուցանում արքունիքում այն ժամանակ, երբ ժողովուրդը ոպասում է խստացած վերանորոգութիւնների իրագործումը։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Այս ամառս պ. Ե. Տէր-Աւետիսեանը, «հնչակից պատուհասից» մարդ մանիչը Դաւրիժից ժամանակաւորապէս Թիֆլիս գալով «Մեղուի» խմբագրատունը Ասրպատականի գրութեան և պարկահասների մասին խօսելով հրատարում էր Սպանդարեանի ուղղութիւնը Ասրպատականի առաջնորդ այժմու հանգուցեալ Գրիգորիս եպիսկոպոսի վերայ։ Սպանդարեանը ուրախութեամբ լսում էր, որ Գրիգորիս եպիսկոպոսը լաւ հայ և քաջ տղամարդ է, որ նա կարեկից է ժողովրդի ցաւերին, որ նա ձին հնձած այցելում է իր հօտը հեռաւոր տեղերում, և գատաւորի դեր է կատարում նոյն իսկ պարսիկների, քիւրդերի մէջ վէճ եղած ժամանակ, որին դիմում են, և թէ պարսիկ կառավարութեան և ժողովրդի մօտ Գրիգորիս եպիսկոպոսը չատ յարգուած, պատուած է, և թէ պարսիկ ժողովուրդը և կառավարութիւնը սոյտ են նայել հայ առաջնորդի վերայ, իբրև հայ ազգի պետի վերայ։

Այդ ասելի հատկանշալի է, երբ իմանում ենք, որ Պարսկաստանում կրօնապետները մեծ նշանակութիւն և ազդեցութիւն ունին, որոնք կարողանում են մինչև անգամ կառավարութեան վճիռներն էլ անգործադրութեան մատնելու։ Սպանդարեանը, որ քաղաքականութիւնից «մի փոքր» բան հասկանում է, անտարակոյս պէտք է ըմբռնէր Ասրպատականի առաջնորդութեան նշանակութիւնը «քաղաքական տեսակէտից» և պէտք է գնահատէր այժմ դժրադդարար հանդուցեալ Գրիգորիս եպիսկոպոսին։

Հոկտեմբերի 24-ին «Մեղուի» «Մեր դրութիւնը» վերնագրով առաջնորդողը սկսվում է այսպէս. «Յանկահայասանը պատրաստ չենք. մեզ մօտ ամենայն հայոց կաթուղիկոսը հիւանդ է, Թիֆլիսը, Վրաստանի և Իմերէթի թեմը առաջնորդ չ'ունի, նոյնպէս և Շուշին, նոյնպէս և Աստրախանի թեմը...» բայց այդ օրը «Մեղուն» առանց առաջնորդողի դուրս եկաւ։ Անցաւ ժամանակը, և «Մեղուի» խմբագրութիւնը դեկտ. 2-ին ստացաւ Գրիգորիս եպիսկոպոսի մահուան լուրը, և իրրև քաղաքական լրագիր, «Մեղուի» առաջին կայ առաջնորդողը նուիրուած էր հանգուցեալ առաջնորդի յիշատակին, որտեղ և ցոյց էր տուած Պարսկաստանի բնակիչների վիճակը և Ասրպատականի առաջնորդութեան նշանակութիւնը։ Բայց բանը լինչումն է. «Մշակի» թղթակից պ. Արմենակը Դաւրիժից իր թղթակցութեան մէջ յայտնել է, որ Ասրպատականի առաջնորդը «քաղաքական տեսակէտից» էլ նշանակութիւն ունի, քանի որ չը կան կօնսիստօրիաներ, պէտք է որ ս. սինոդը չտապեցնէ առաջնորդի նշանակելը։

Այդ «միտքը» գանում է «Արձագանքի» բարի հրեշտակը «Մեղուի» առաջնորդողի մի քանի տողերում, — ահ, սարսափելի բան — և այն էլ երկու օր յետոյ յայտնած։ Պ. Արմենակը Դաւրիժում անչուշտ ծիծաղում է, բայց Սպանդարեանը ցաւում է, որ իւր պատճառով «Արձագանքի» դատարկութիւնն է երեան հանվում և... Սպանդարեանն ինչ անի, որ կան մարդիկ, որոնք տասնեակ տարիներով գրում են, էլի գրում են բայց և այնպէս նրանց վերայ ուշադրութիւն դարձնող չը կայ, Սպանդարեանը ինչ անի, որ «Արձագանքի» խմբագիրը ինքը խմբագիրն է, նա թող լինի խմբագիր և էլի խմբագիր։ «Արձագանքի» պ. խմբագրի ոգու անբովանդակութիւնը իմանալու համար հրաւիրում ենք ընթերցողին կարդալ դեկտ. 5 «Մեղուի» № 134 «Ասրպատականի առաջնորդի մահուան առթիւ» առաջնորդողը։

Հաղուագիւտ երևոյթ չէ, եթէ մեկ առարկայի վերայ միևնոյն թեկուզ չատ հատարակ միտքն է յայտնում մեկ լրագրի թղթակիցը և միւս լրագրի խմբագիրը, հաղուագիւտ երևոյթը և հետաքրքրին է իմանալ թէ այժմս «Արձագանքի» խմբագրութիւնը (ոչ խմբագրատունը) որտեղ է տեղաւորուած, սա այնքան «հազուագիւտ երևոյթ» է, որ մենք զարմացած լռում ենք։ Sapienti sat.

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.—Անցեալ նոյեմբերի 28-ին «Մարդ. ընկերութեան» դահլիճում յօգուտ «ընկ.» կայացաւ «բնտանեկան երեկոյ» և «վիճակախաղութիւն»։ Դահլիճի չքեղ զարդարուածքը, հանդիսականների չատութիւնը, ինչպէս սեղանի չռայլութիւնը այնքան մեզ չը զարմացրին ինչքան որ զարմացրուց «ընկերութեան» խորհրդի մի անդամի «քաղաքավարութիւնը», երբ նա (պ. անդամը) «պարիս ժամանակին «բէժիտորութեան» դերն էր կատարում, հրամայեց որ պարին չը մասնակցողները դահլիճից «вонъ къ черту» չի նայելով որ նրա հրաւիրուած հիւրերն են և դահլիճի մուտքին վճարել են. միևնոյն անդամն է, որ իրա «մայրենի լեզուից» մի խօսք անգամ չը գիտէ, բայց հրապարակապէս գոռ-գոռում է թէ что за Эчмадзин. что за церква, что за Армян. газетъ. «կեցցէ ընդհանուր ժողով, կեցցէ ազգի զաւակ, որ այդքան պօռ-պօռալ գիտեն։ Նման խնջոյքում պէտք է ասենք, որ «ընկ.» ն. ազատը, իբրև ներկայացուցիչ հանդիսին, նա իրա առաջի բաժակը «тостъ» առաջարկեց հիւրերին այսպէս «господа за здоровье Русгамова.» Հուսկա, չը նայելով որ հիմնադիր Ռուստոմեանը 15 տարուց աւելի է, որ վախճանուել է, դուցէ անձնական կըլքերից զրկուած ենք, որ յանդգնում ենք, այնպէս չէ, պ. տիրացու։

* * *

«Փակը» իր № 32-ում համակրութեամբ է վերաբերում «Մեղուի» քրանեհինգամեայ յոբելեանին։ «Անկարելի բան է», ասում է նա, «որ բոլոր մարդիկ, բոլոր թերթերը միևնոյն ուղղութիւնը, միևնոյն հայեացքը, տեսակէտը... ունենային հասարակական խնդիրների վերաբերութեամբ», և այս ուղիղ նկատողութիւնից յետոյ, չարունակելով վերջացնում է. «Մեզ մի կողմ ձգեն իրենց սրտից ամեն տեսակ անհաշտ խորհուրդներ և ուրախ ոգով, միաբան ու լաւագոյն խնդատութեամբ ողջունեն 25-ամեայ հայ լրագրի յոբելեանը...»

* * *

Լոյս տեսաւ «Վարժարան» ամսագրի № 5 րդ դեկտեմբերի համարը։

* * *

Պետերբուրգից հեռագրումն են «Rassvet» թերթին, որ դեկտ. 18-ին այնտեղի հայոց եկեղեցում կատարուել է հանդիսաւոր ի Տէր հանդուցեալ Վեհափառ Գէորգ Դ-ի հոգեհանգիստը։ Եկեղեցին լիքն է եղել աղօթող բազմութեամբ։ Ներկայ գտնուողների թուումն էին՝ ազգային լուսաւորութեան պաշտօնեայ Դէլեանովը, երեմն պաշտօնեաներ. գրաֆ-Լօրիս-Մէլիքեանը և գրաֆ-Իգնատիեվը, պաշտօնէութեան օգնականներ՝ արտաքին գործերի վերլանգալի և ներքին գործերի Դուրնովօ, կովկասի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կօրսակով. կովկասեան գեներալներ. կարմալին, Դուբչին և ուրիշները։ Ռուսաց կառավարութիւնը, օտարները այսպէս են յարգում հայոց ազգային եկեղեցու պետի հոգեհանգիստը։ Նոյն իսկ օտարներից որքան բաներ ունինք մենք երկ աչխարհ եկածներս սովորելու։

* * *

Լսում ենք, որ «Ազբիւրի» առաջին համարը արդէն տպվում է. Նկարների կլիչեները պատրաստ են Պետերբուրգի «Նիվա» ն. ազատը, իբրև ներկայացուցիչ հանդիսին, նա իրա առաջի բաժակը «тостъ» առաջարկեց հիւրերին այսպէս «господа за здоровье Русгамова.» հուսկա, չը նայելով որ հիմնադիր Ռուստոմեանը 15 տարուց աւելի է, որ վախճանուել է, դուցէ անձնական կըլքերից զրկուած ենք, որ յանդգնում ենք, այնպէս չէ, պ. տիրացու։

* * *

«Փակը» իր № 32-ում համակրութեամբ է վերաբերում «Մեղուի» քրանեհինգամեայ յոբելեանին։ «Անկարելի բան է», ասում է նա, «որ բոլոր մարդիկ, բոլոր թերթերը միևնոյն ուղղութիւնը, միևնոյն հայեացքը, տեսակէտը... ունենային հասարակական խնդիրների վերաբերութեամբ», և այս ուղիղ նկատողութիւնից յետոյ, չարունակելով վերջացնում է. «Մեզ մի կողմ ձգեն իրենց սրտից ամեն տեսակ անհաշտ խորհուրդներ և ուրախ ոգով, միաբան ու լաւագոյն խնդատութեամբ ողջունեն 25-ամեայ հայ լրագրի յոբելեանը...»

* * *

Լսում ենք, որ «Ազբիւրի» առաջին համարը արդէն տպվում է. Նկարների կլիչեները պատրաստ են Պետերբուրգի «Նիվա» ն. ամենայայտնի վարագրիչների մօտ։ Ասում են, որ «Ազբիւրին» մասնակցելու են մեր գրականութեան մէջ աչքի ընկնող գրողները։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԻՆՃԻԿԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ՖԻՐՄԱՅԻ ՉԱՅԸ գործածողներին խնդրում ենք ուշադրութիւն գարձնել, որ մեր չայի **ՓԱԹԵԹի** վերայ լինին Կ. և Ս. տառերը։

Եղբարք Կ. և Ս. Պօպովներ, առևտրական տուն Մօսկվայում։

(10—6)

ԱՐԴԵՆ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Ա) Մեծագիր ՕՐԱՑՈՑՑ 1883 թ. Ք.։ Սկզբումն պատկեր՝ ՍԲՐՈՑՆ ԳԱՂԱՐԱՑ, իսկ վերջումն՝ ՅԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ, ըստ յաւելուածով։ Գինն է մինչև 600 վերստ 35 կոպ., իսկ նրանից բարձր 40 կ.։

Բ. Փոքրագիր ՕՐԱՑՈՑՑ 1883 թ. Ք., սկզբումն պատկեր ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, վերջումը՝ ՅՕՒՅԱԿ ԳՐԱՆՑ։ Գինն է 15 կոպէկ։

Գ. Ամենօրեայ ՀԱՅՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՑՑ 1883 թ. Ք., մեծ թուանշաններով, սև, կապուտ և կարմիր գոյներով, տախտակի գեղ. պատկերն. զարդարած։ Սրևանում գինն է 1 ռուբլի, իսկ ուրիշ քաղաքներում՝ 1 ռ. 25 կ.։

Երեք օրացոյցներում էլ կան՝ Ք. և Լ. տօները, հանդիպած գուշակութեամբ օդոց։

Մեծագիր և փոքրագիր օրացոյցներում մտցրած են բոլոր օրհ., հարց., մկ. և Հմբ. կարգաց։

Մեր հասցէն՝ Въ г. Эриванъ. А. С. Гуламирянцъ.

Խմբ.-հրատ. ԱՐԾՎԻ ԴՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ։

„ՓԱՓԱԿ“

(ԶՕՐԲՐՕՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆՈՒՄ

Առաջիկայ 1883 թուականին

Ալ հրատարակվի նոյն դիրքով չաբաթական մի անգամ—հետևեալ պրօգրամմայով. I. Տէրութեան կարգադրութիւններ: II. Առաջնորդող յօդուածներ: III. Թղթակցութիւններ: VI. Ջեղական լուրեր: V. Խառն լուրեր: VI. Բանաստեղական (Ֆելիետօն, պատկերներ, վէպիներ, ինքնուրոյն կամ թարգմ. յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերի վերաբերութեամբ, մանկանախօսութիւն): VII. Փաստախանիք խմբագրութեան և VIII. յայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 3 ռ., իսկ Երևանից դուրս—ամեն տեղ—4 ռուբ. կ ա ն խ իկ վ ճ ա ր ե լ ի:

Առարգրուել կարելի է «Փակի» խմբագրատանը: Յատուկ յատկացեալներ դիմում են—Эривань. Въ Редакцію «ПСАКЪ».

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 18 го Декабря 1882 г.

Տպարան Ա. Ոստինեանց և ընկ.